

Պ-765-20.04.2015-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 12-ի ՀՕ-225 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում *«18 տարին լրացած քաղաքացիները» բառերը փոխարինել «հանրաքվեի անցկացման օրը 18 տարին լրացած քաղաքացիները` Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրություններին մասնակցելու համար սահմանված կարգով» բառերով,*

2) 3-րդ մասում *«դատապարտված և» բառերից հետո լրացնել «քրեակատարողական հիմնարկում» բառերը,*

3) *3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ և 5-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.*

«4. Պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները, ձերբակալված կամ կալանավորված անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները հանրաքվեին մասնակցում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով:»,

5) *Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հարաքվեն կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով, որին կարող են մասնակցել ընտրական օրենսգրքով համապետական ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները:»:*

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասում *«ոչ շուտ, քան 45 և ոչ ուշ, քան 60 օր հետո» բառերը փոխարինել «ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 65 օր հետո» բառերով,*

2) 8-րդ մասում *«40 օր առաջ» բառերը փոխարինել «50 օր առաջ» բառերով:*

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 8-րդ մասում *«ոչ շուտ, քան 45 և ոչ ուշ, քան 60 օր հետո» բառերը փոխարինել «ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 65 օր հետո» բառերով,*

2) 9-րդ մասում *«30 օր առաջ» բառերը փոխարինել «50 օր առաջ» բառերով:*

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 11. Կենտրոնական հանձնաժողովի լիազորությունները

Կենտրոնական հանձնաժողովն հանրաքվեն կազմակերպող և հանրաքվեի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմին է, որի

գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Կենտրոնական հանձնաժողովը՝

1) վերահսկողություն է իրականացնում հանրաքվեի նախապատրաստման և անցկացման համար հատկացված պետական բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ.

2) ընդունում է իր և ստորադաս հանձնաժողովների կանոնակարգերը.

3) կազմակերպում և անցկացնում է հանրաքվեի անցկացման մասնագիտական դասընթացները, սահմանում դասընթացներ կազմակերպելու և որակավորում շնորհելու կարգը.

4) վերահսկողություն է իրականացնում հանրաքվեի օրենսդրության միատեսակ կիրառման նկատմամբ.

5) սահմանում է քվեաթերթիկների, արձանագրությունների և հանրաքվեի այլ փաստաթղթերի ձևերը, նմուշները, դրանց լրացման և պահպանման կարգը, հանրաքվեի հանձնաժողովներին ապահովում է անհրաժեշտ փաստաթղթերով.

6) իր լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ, որոնք պարտադիր են կատարման հանրապետության ողջ տարածքում.

7) վերացնում, ուժը կորցրած, անվավեր կամ չեղյալ է ճանաչում հանձնաժողովների՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքին հակասող որոշումները,

8) լսում է հանրաքվեի հանձնաժողովների և պետական մարմինների հաղորդումները հանրաքվեի նախապատրաստման ու անցկացման մասին.

9) հավատարմագրում է զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, դիտորդներին.

10) կազմակերպում է հանրաքվեի դրվող Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև հանրաքվեի դրվող օրենքի *նախագծերի հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով.*

11) ընդունում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված որոշումներ, հանրաքվեի գործընթացները կանոնակարգելու նպատակով ընդունում է սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքին չհակասող որոշումներ.

12) հրապարակում է ուսումնական ձեռնարկ *տեղամասային* հանձնաժողովների անդամների, *վստահված անձանց* և դիտորդների համար.

13) սահմանում է հանրաքվեի հանձնաժողովներում վիճակահանություններ անցկացնելու կարգը.

14) հաստատում է քվեատուփի նմուշը (չափսերը).

15) իրականացնում է վերահսկողություն քարոզչության ֆինանսավորման հիմնադրամների նկատմամբ.

16) իրականացնում է սույն օրենքով, ինչպես նաև հանրաքվեին վերաբերելի *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով* նախատեսված այլ լիազորություններ:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«**Հոդված 12. Ընտրատարածքային հանձնաժողովների լիազորությունները**

Ընտրատարածքային հանձնաժողովի սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնում է *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով* սահմանված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: *Ընտրատարածքային* հանձնաժողովը՝

1) վերահսկողություն է իրականացնում ընտրատարածքում սույն օրենքի և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի* պահանջների կատարման նկատմամբ.

2) սահմանում է հանրաքվեի տեղամասերի հերթական համարները՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգին համապատասխան, և այդ տվյալները երկօրյա ժամկետում ներկայացնում կենտրոնական հանձնաժողով.

3) իր և *տեղամասային* հանձնաժողովների գործունեության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում կենտրոնական հանձնաժողով.

4) քննարկում է *տեղամասային* հանձնաժողովների որոշումների և գործողությունների վերաբերյալ ստացված դիմումները (բողոքները), վերանայում կամ վերացնում է տեղամասային հանձնաժողովների՝ սույն օրենքին և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքին* հակասող որոշումները.

5) *սույն օրենքով և ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգին համապատասխան իրականացնում է քվեարկության արդյունքների աղյուսակավորում.*

6) հետևում է հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակները կազմելուն և համընդհանուր ծանոթացման համար դրանք հանրաքվեի տեղամասերում ներկայացնելուն.

7) վերահսկում է հանրաքվեի տեղամասային կենտրոնների՝ սույն օրենքի և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի* պահանջներին համապատասխան կահավորումը.

8) վերահսկողություն է իրականացնում *տեղամասային* հանձնաժողովների կողմից սույն օրենքի և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի* պահանջների կատարման նկատմամբ.

9) անվավեր է ճանաչում հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքները.

10) իրականացնում է սույն օրենքով, ինչպես նաև *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով* նախատեսված և հանրաքվեին վերաբերելի այլ լիազորություններ:»:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Հոդված 13. Տեղամասային հանձնաժողովների լիազորությունները

Տեղամասային հանձնաժողովների սույն օրենքով սահմանված լիազորություններն իրականացնում են *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով* սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովները: *Տեղամասային* հանձնաժողովը՝

1) կազմակերպում է հանրաքվեի դրված հարցի քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքները հանրաքվեի տեղամասում.

2) կազմում է հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, արձանագրության օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում.

3) հանձնաժողովի կնիքը, դրոշմակնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության 2 օրինակները, հանրաքվեի փաստաթղթերի պարկը և քվեատուփը ներկայացնում է *ընտրատարածքային* հանձնաժողով.

4) իրականացնում է սույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված և հանրաքվեին վերաբերելի այլ լիազորություններ:»:

Հոդված 7. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 15. Հրապարակայնությունը հանձնաժողովների աշխատանքներն իրականացնելիս

Հանրաքվեն նախապատրաստվում և անցկացվում է հրապարակայնորեն՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգին համապատասխան՝ սույն օրենքի առանձնահատկությունների հաշվառմամբ:»:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 15. Հանրաքվեի ֆինանսավորումը

Հանրաքվեի կազմակերպման և անցկացման (ներառյալ՝ ցուցակները կազմելը, հանրաքվեի հանձնաժողովների անդամների ուսուցում կազմակերպելը), ինչպես նաև հանձնաժողովների գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների կազմակերպման և անցկացման ֆինանսավորման կարգին համապատասխան:»:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ օրենքով չարգելված ձևերով և միջոցներով քարոզչություն կատարելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հեղինակը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը), կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները:

Քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:»:

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պետությունը ապահովում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով քարոզչություն կատարողներին դափնիքներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք քարոզչություն կատարողներին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

3) 2-րդ մասից հետո լրացնել 2.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կենտրոնական հանձնաժողով են ներկայացնում այն դափնիքների և այլ շինությունների ցանկը, որոնք քարոզչություն կատարողներին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

4) 3-րդ մասում «քվեարկությունից» բառերը փոխարինել «քվեարկության օրվանից» բառերով.

5) 3-րդ մասից հետո լրացնել 3.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«3.1 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն (պատգամավորական խումբ) իրավունք ունի՝

ա) անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե.

բ) վճարովի հիմունքներով օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 180 րոպե՝ քարոզչության հիմնադրամի միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության եթերաժամերից կարող են օգտվել սկսած քվեարկության օրվանից 30 օր առաջ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններին (պատգամավորական խմբերին) վճարովի և անվճար եթերաժամը տրամադրվում է խմբակցության (պատգամավորական խմբի) ղեկավարի կամ քարտուղարի կողմից եթերաժամ տրամադրողին ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա:

Անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը եթերաժամ տրամադրելու համար սահմանված ժամկետից առնվազն 5 օր առաջ:

Ձանգվածային լրատվության միջոցներով իրականացվող քարոզչության նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների նախընտրական քարոզչության համար սահմանված կանոնները:»:

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝

ա) պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնողներին, բացառությամբ քաղաքական և հայեցողադական պաշտոններ զբաղեցնողների, ինչպես նաև ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.

բ) սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին.

գ) հանրաքվեի հանձնաժողովի անդամներին.

դ) բարեգործական և կրոնական կազմակերպություններին.

ե) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին:»:

7) 8-րդ մասի վերջին երկու նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այդ տեղերը պետք է հարմար լինեն քվեարկողների այցելության համար և ապահովեն հավասար մակերես «ԱՅՈՒ» և «ՈՉ» քարոզչության համար:»:

8) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման ժամանակ գանգվածային լրատվության միջոցները պարտավոր են նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և

վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:

Արգելվում է հանրաքվեի անցկացման օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններին կամ հեռուստաընկերություններին հրապարակել հանրաքվեի մասնակիցների հարցման արդյունքներն այն մասին, թե հանրաքվեի դրված հարցին «ԱՅՈՒ» կամ «ՈՉ» են քվեարկել:»:

9) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ պարունակեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ:»:

10) 11-րդ մասի «ա», «բ» և «ե» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) անանուն քարոզչական նյութեր տարածելը: Անանուն կամ կեղծ քարոզչական նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ հանրաքվեի հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններին՝ ապօրինի գործողությունները դադարեցնելու համար.

բ) քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը քարոզչություն կատարողներին արգելվում է քաղաքացիներին ցանկացած եղանակով անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ.

ե) քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը:»:

11) 12-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի 11-րդ մասի «ե» կետի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ հանրաքվեի հանձնաժողովի պահանջից:»:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի «գ» կետի երկրորդ նախադասությունը հանել,

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Հիմնադրամի հաշվում կատարված մուծումների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 100000-ապատիկը:

Քարոզչության հիմնադրամ կուտակությունների, հասարակական կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների (պատգամավորական խմբերի) մուծումների չափը յուրաքանչյուրի համար չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 25.000-ապատիկը: Նրանցից յուրաքանչյուրը կարող է կատարել մուծում միայն մեկ հիմնադրամում: Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է քարոզչության հիմնադրամ կատարել նվազագույն աշխատավարձի մինչև 100-ապատիկի չափով կամավոր մուծում:

Քարոզչության հիմնադրամում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացվում են կենտրոնական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն քվեարկության օրվանից 20 օր և 10 օր առաջ, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ 3-րդ օրը:»:

3) 5-րդ մասից հետո լրացնել նոր 5.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձանց՝ հիմնադրամների հաշվին մուծած գումարները, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափը գերազանցող մուծումները փոխանցվում են պետական բյուջե:»:

Հոդված 11. Օրենքի 22-րդ հոդվածի՝

- 1) Վերնագրում «իրավունքը» բառից հետո լրացնել «և վստահված անձը» բառերը,
- 2) 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները.»,

- 3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Միջազգային կազմակերպություններին, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, և օտարերկրյա հասարակական կազմակերպություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով իրավեր ուղարկելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով՝ համապետական ընտրությունների համար սահմանված կարգով:»,

- 4) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ հանրաքվեի վերաբերյալ զեկույցները տեղադրվում են կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում:»,

- 5) 3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

«4. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը) և հանրաքվե նախաձեռնողը կարող են ունենալ վստահված անձինք:

Վստահված անձ կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

Վստահված անձ չեն կարող լինել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողները, ոստիկանությունում և ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները, դիտորդները, հանրաքվեի հանձնաժողովի անդամները:

Հանրաքվե նշանակելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողը մինչև քվեարկության օրվանից 15 օր առաջ կարող են կենտրոնական հանձնաժողով ներկայացնել գրավոր դիմում վստահված անձանց վկայականներ ստանալու համար: Հանձնաժողովը վկայականում նշում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների (պատգամավորական խմբերի), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողի անվանումը և ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում տրամադրում է վկայականներ՝ կազմավորված տեղամասերի թվի եռապատիկին հավասար թվով: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցության (պատգամավորական խմբի), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողի կողմից վկայակներում լրացվում են վստահված անձանց անունները եւ վկայականները տրամադրվում են վստահված անձանց:»:

Հոդված 12. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 23. **Դիտորդների, վստահված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքները, պարտականություններն ու գործունեության երաշխիքները**

Հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու կարգն ու պայմանները, դիտորդների հավատարմագրումը, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցի

ներկայացուցիչների իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

Հանրաքվեի ժամանակ վստահված անձանց կարգավիճակը, գրանցումը, լիազորությունները, իրավունքները, պարտականությունները եւ գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:»:

Հոդված 13. Օրենքի 25-րդ հոդվածը շարադրելի հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 25. Հանրաքվեի քվեաթերթիկը, քվեարկության ծրարը, կնիքները, դրոշմը և քվեատուփը

1. Հանրաքվեի քվեաթերթիկի նմուշը, ձևը և շարադրանքը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը:

2. Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քաղաքացի ստանում է մեկական քվեաթերթիկ և քվեարկության ծրար: Միաժամանակ երկու և ավելի հարցի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու դեպքում քաղաքացիներին տրվում են հանրաքվեի դրված հարցերի թվին համապատասխան թվով քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ: Քվեաթերթիկները և ծրարները պատրաստվում են այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:

3. Քվեաթերթիկը պետք է լինի դակված (պերֆորացված), պարունակի քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը, տպագրատան անվանումը և ծանուցում՝ քվեաթերթիկի լրացման կարգի մասին: Քվեաթերթիկները պետք է պատրաստված լինեն անթափանց թղթից:

Քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում են քվեաթերթիկի հերթական համարը, իսկ հատման գծից ներքև՝ «ԱՅՈ» և «ՈՉ» բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով:

Քվեաթերթիկները տեղամասային հանձնաժողովներին հատկացվում են տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով՝ քվեարկության նախորդ օրը, բայց ոչ պակաս, քան հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվից 2 քվեաթերթիկ ավելին:

4. Քվեաթերթիկների տպագրումն ապահովում է կենտրոնական հանձնաժողովը: Քվեաթերթիկները տպագրվում են հանրաքվեի անցկացման օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ լիազոր մարմնի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 10 օր առաջ տրամադրած տեղեկատվության հիման վրա:

5. Քվեարկության ծրարների պատրաստումն ապահովում է կենտրոնական հանձնաժողովը: Քվեարկության ծրարները տեղամասային հանձնաժողովին հատկացվում են քվեարկության նախորդ օրը:

6. Հանրաքվեի հանձնաժողովների կնիքների, դրոշմակնիքի և տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքների նմուշները հաստատում է կենտրոնական հանձնաժողովը: Դրանք պատրաստվում են կենտրոնական հանձնաժողովի պատվերով:

7. Տեղամասային հանձնաժողովի անդամը և վստահված անձը կարող են ունենալ սեփական դրոշմ, սակայն այն ունենալը պարտադիր չէ: Տեղամասային հանձնաժողովի անդամը և վստահված անձը սեփական դրոշմը կարող են օգտագործել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում իրենց ստորագրության փոխարեն:

8. Հանրաքվեի քվեաթերթիկները, քվեարկության ծրարները և կնիքները հանձնելու, ինչպես նաև կնիքները վերադարձնելու կարգը սահմանվում են սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:

9. Քվեատուփի նմուշը (չափսերը) հաստատում է կենտրոնական հանձնաժողովը: Տեղամասային կենտրոնում կարող են օգտագործվել մեկից ավելի քվեատուփեր՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

Հոդված 14. Օրենքի 28-35-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 28. Քվեաթերթիկը լրացնելու կարգը

1. Քվեարկության մասնակիցը, եթե համաձայն է ընդունել հանրաքվեի դրված հարցը, քվեաթերթիկում՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած ձևով միատեսակ նշում է կատարում "ԱՅՈ" բառի դիմացի դատարկ քառանկյունում, իսկ եթե համաձայն չէ՝ "ՈՉ" բառի դիմացի դատարկ քառանկյունում:

2. Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող քվեարկության մասնակիցն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի հանձնաժողովի անդամ, *վստահված անձ կամ* դիտորդ: Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ անձի: Բացի նշված դեպքից, քվեաթերթիկը լրացնելիս քվեարկության խցիկում այլ անձի ներկայությունն արգելվում է: Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող մասնակցին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

3. Եթե հանձնաժողովի անդամը կամ *վստահված անձը* գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունի պահանջելու, որ իր գնահատականը արձանագրվի գրանցամատյանում:

Հոդված 29. Քվեաթերթիկների վավերականությունը

1. Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

1) միաժամանակ «ԱՅՈ» և «ՈՉ» բառերի դիմաց նշումներ է ներառում.

2) որևէ նշում չի ներառում.

3) բացի քվեարկության համար կենտրոնական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ՝ քվեարկողի ինքնությունը բացահայտող նշում.

4) *տեղամասային* հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ սեփական դրոշմով դրոշմված կամ անհատական կնիքով կնքված չէ.

5) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը: Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե քվեարկությանը մասնակցողի մտադրությունը հստակ է և աներկբա:

2. Քվեաթերթիկը վավեր է, եթե այն անվավեր չէ:

Հոդված 30. Չսահմանված նմուշի քվեարկության ծրարները, չսահմանված նմուշի քվեաթերթիկները

1. Չսահմանված նմուշի քվեարկության ծրարները և չսահմանված նմուշի քվեաթերթիկները որոշվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 31. Տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելու կարգը

1. Տեղամասում հանրաքվեի քվեարկության արդյունքներն ամփոփվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

2. Հանրաքվեն այլ ընտրության կամ տեղական հանրաքվեի հետ նույն օրն անցկացվելու դեպքում տեղամասային հանձնաժողովն առաջին հերթին ամփոփում է հանրաքվեի քվեարկության արդյունքները:

Հոդված 32. Տեղամասային հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը

1. Տեղամասային հանձնաժողովը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների հաշվարկները, կազմում է հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, դրանում նշելով՝

1) տեղամասում հանրաքվեի մասնակիցների հիմնական ցուցակում ընդգրկված քաղաքացիների թիվը, յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում (այդ թվում՝ քվեարկության օրն հանրաքվեի տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում) ընդգրկված քաղաքացիների թվերը՝ առանձին-առանձին.

2) հանրաքվեի տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը, որը հավասար է հիմնական ցուցակում և լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվերի գումարին.

3) քվեարկության մասնակիցների թիվը (լրացվում է գրանցված և քվեաթերթիկներ ստացած քաղաքացիների ստորագրությունների թիվը).

4) տեղամասային հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը և ելունդների համարները (լրացնում է ընտրատարածքային հանձնաժողովը).

5) մարված քվեաթերթիկների (չօգտագործված և քվեարկությանը մասնակցած քաղաքացիների կողմից ոչ ճիշտ լրացված կամ վնասված և հետ տված քվեաթերթիկներ) ընդհանուր թիվը.

6) անվավեր քվեաթերթիկների թիվը.

7) «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների թիվը.

8) «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկների թիվը.

9) քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը:

2. Արձանագրության կազմումը և ստորագրումը, տեղամասում դրա հրապարակումը հանրաքվեի փաստաթղթերը փաթեթավորելը և ընտրատարածքային հանձնաժողովին ներկայացնելը իրականացվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով և ժամկետներում:

Հոդված 32.1. Անձշտությունները որոշելու կարգը

1. Անձշտությունների չափը հաշվարկվում և արձանագրվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 33. Ընտրատարածքային հանձնաժողովի գործողությունները տեղամասային հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո

1. Ընտրատարածքային հանձնաժողովում ստուգվում է հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, իսկ թվաքանական սխալների առկայության դեպքում տեղամասային հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով: Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

2. Ընտրատարածքային հանձնաժողովը հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալների մուտքագրումը համակարգիչ, ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորումն իրականացնում է ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանած կարգով և ժամկետներում:

3. Ընտրատարածքային հանձնաժողովն հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից 24 ժամ հետո ներկայացնում է կենտրոնական հանձնաժողով:

4. Հանրաքվեի ժամանակ ընտրատարածքային հանձնաժողովն ընտրատարածքում քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում կենտրոնական հանձնաժողով:

Հոդված 34. Կենտրոնական հանձնաժողովում հանրաքվեի արդյունքների ամփոփման կարգը

1. Կենտրոնական հանձնաժողովը ընտրատարածքային հանձնաժողովներից ստացված՝ հանրաքվեի տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո, սույն հոդվածի պահանջներին համապատասխան, ամփոփում է հանրաքվեի քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք ու հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում այդ արդյունքները:

2. Կենտրոնական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:

3. Քվեարկության արդյունքների մասին արձանագրությունում նշվում են՝

1) հանրաքվեի մասնակիցների հիմնական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թիվը, լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվերը՝ առանձին-առանձին.

2) հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը, որը հավասար է հիմնական ցուցակներում և լրացուցիչ ցուցակներում ընդգրկված քաղաքացիների թվերի գումարին.

3) քվեարկության մասնակիցների թիվը.

4) տեղամասային հանձնաժողովներին հատկացված քվեաթերթիկների թիվը և ելունդների համարները.

5) տեղամասային հանձնաժողովներում մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.

6) անվավեր քվեաթերթիկների ընդհանուր թիվը.

- 7) «ԱՅՈ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.
- 8) «ՈՉ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.
- 9) քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեարկության ծրարների ընդհանուր թիվը.
- 10) անձշտությունների գումարային չափը:

Հանրաքվեի դեպքում անձշտությունների գումարային չափը հավասար է կազմավորված բոլոր հանրաքվեի տեղամասերի անձշտությունների գումարային չափերի գումարին:

4. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:

5. Հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է քվեարկության արդյունքների արձանագրության պատճենը՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

6. Կենտրոնական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում որոշում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ:

Հոդված 35. Հանրաքվեի արդյունքների ամփոփումը

1. Կենտրոնական հանձնաժողովը, սույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է հանրաքվեի արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

- 1) հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին.
- 2) հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.
- 3) հանրաքվեի դրված նախագծի չընդունման մասին.
- 4) հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու և նոր քվեարկություն նշանակելու մասին:

2. Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:

3. Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է չընդունված, եթե ապահովված չեն սույն հոդվածի 2-րդ մասի պահանջները:

4. Կենտրոնական հանձնաժողովը, սույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտմանն ուղղված հանրաքվեի արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

- 1) հանրաքվեի արդյունքները հաստատելու մասին.
- 2) հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.
- 3) հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու և նոր քվեարկություն նշանակելու մասին:

5. Եթե քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենքի և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի* այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել հանրաքվեի արդյունքների վրա, ապա կենտրոնական հանձնաժողովը որոշում է ընդունում հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները:

6. Եթե հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ընթացքում կամ հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու ընթացքում տեղի են ունեցել սույն օրենքի և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի* այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել հանրաքվեի արդյունքների վրա, ապա կենտրոնական հանձնաժողովը որոշում է ընդունում հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու մասին և նշանակում է նոր քվեարկություն:

7. Հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերով դիմում սահմանադրական դատարան կարող է ներկայացվել հանրաքվեի արդյունքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ մինչև 5-րդ օրը, ժամը 18.00-ն:

8. Հանրաքվեի առանձին տեղամասերում վերաքվեարկություն նշանակվում և անցկացվում է սույն օրենքով և *Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով* սահմանված կարգով և ժամկետներում: Նոր քվեարկությունն անցկացվում է հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց ոչ շուտ, քան 15, և ոչ ուշ, քան 30 օր հետո սույն օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 15. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սահմանադրությունը կամ դրանում փոփոխությունները և հանրաքվեով ընդունված օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հանրաքվեով ընդունված իրավական ակտի հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակումն իրականացվում է կենտրոնական հանձնաժողովի՝ հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին որոշումը հրապարակվելուց հետո 8-րդ օրը, եթե կենտրոնական հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել սահմանադրական դատարան:

Եթե կենտրոնական հանձնաժողովի՝ հանրաքվեի արդյունքներով ընդունված որոշումը բողոքարկվել է սահմանադրական դատարան, ապա «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հանրաքվեով ընդունված իրավական ակտի հրապարակումն իրականացվում է *հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումն ուժի մեջ թողնելու կամ հանրաքվեի դրված նախագիծը ընդունված համարելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումից* հետո ոչ ուշ, քան 5-օրյա ժամկետում:»:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՔԿԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
	1	2	3	4
1.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	1-ին հոդված	4-րդ մասում «ընտրական» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական» բառերով:	Ընդունված է
2.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	1-ին հոդված	«Հանրաքվեր մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը «մասնակցել» բառից հետո լրացնել «հանրաքվեի անցկացման օրը» բառերով:	Ընդունված է
3.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	1-ին հոդված	«Հանրաքվեր մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5-րդ մասով. «5. Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները հանրաքվեի ժամանակ քվեարկությանը մասնակցում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու դեպքում:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մաս):	Ընդունված է, բովանդակային առումով առաջարկությունը իրացված է 4-րդ մասում (տես նաև)
4.	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	1-ին կետում «6-րդ մասում» բառերը փոխարինել «7-րդ մասում» բառերով	Ընդունված է
5.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող Օրենքի 11-րդ հոդվածի վերնագրում և առաջին պարբերությունում «Հանրաքվեի կենտրոնական» բառերը փոխարինել «Կենտրոնական» բառերով, հաշվի առնելով Օրենքի 9-րդ հոդվածում սահմանված հապավումը:	Ընդունված է
6.	Պատգամավոր Հովհաննես	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող Օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ և 17-րդ կետերում «ընտրական» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական»	Ընդունված է

	Սահակյան		բառերով:	
7.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ կետում «նախագծերը» բառը փոխարինել «նախագծերի հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով» բառերով:	Ընդունված է
8.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 11-րդ հոդվածի 12-րդ կետում «օրենքով և» բառերը փոխարինել «օրենքով և Հայաստանի Հանրապետության» բառերով:	Ընդունված է
9.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 11-րդ հոդվածի 13-րդ կետում «հանրաքվեի» բառը հանել:	Ընդունված է
10.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 6-րդ կետով. «6) հանրաքվեի հանձնաժողովների կնիքների, դրոշմակնիքի և տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքների նմուշները և պատվիրում է դրանք.» և փոխել հաջորդող կետերի համարակալումը:	Ընդունված է, բովանդակային առումով այն իրացված է նախագծի 13-րդ հոդվածում
11.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն՝ պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Զոհրաբյան,</p> <p>Ժառանգություն խմբակցություն</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյան</p>	4-րդ հոդված	<p>«Հոդված 11. Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի լիազորությունները» հոդվածում կատարել հետևյալ լրացումները.</p> <p>9-րդ կետում «դիտորդներին» բառից հետո դնել ստորակետ և լրացնել «Դաշինքների տրամադրում է վստահված անձանց վկայականները» բառերը,</p> <p>13-րդ կետում «հանձնաժողովի անդամների» բառերից հետո դնել ստորակետ և լրացնել «վստահված անձանց» բառերը:</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Նկատի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրաքվեի նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Նախագահը, Ազգային ժողովը, իսկ պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ՝ նաև կառավարությունը, մյուս կողմից հանրաքվեի արդյունքների վիճարկումը ՍԴ-ում կարող են իրականացնել Նախագահը, ԱԺ-ն կամ պատգամավորների 1/5-րդը, տրամաբանական ենք համարում, որ ԱԺ խմբակցությունները, պատգամավորական խմբերը, ինչպես նաև հանրաքվե</p>

				<p> նախաձեռնողը ունենան վստահված անձով ներկայացվելու իրավունք: Առ այդ, օրենքի 11-րդ հոդվածում լրացվել է նաև նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը) և հանրաքվե նախաձեռնողը կարող են ունենալ վստահված անձինք: Վստահված անձ կարող են լինել միայն ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները: Հանրաքվե նշանակելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողը մինչև քվեարկության օրվանից 15 օր առաջ կարող են կենտրոնական հանձնաժողով ներկայացնել զրավոր դիմում վստահված անձանց վկայականներ ստանալու համար: Հանձնաժողովը վկայականում նշում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների (պատգամավորական խմբերի), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողի անվանումը և ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում տրամադրում է վկայականներ՝ կազմավորված տեղամասերի թվի եռապատիկին հավասար </p>
--	--	--	--	---

				թվով: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցության (պատգամավորական խմբի), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողի կողմից վկայակններում լրացվում են վստահված անձանց անունները և վկայականները տրամադրվում են վստահված անձանց: Հանրաքվեի ժամանակ վստահված անձանց կարգավիճակը, գրանցումը, լիազորությունները, իրավունքները, պարտականությունները և գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:
12.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 12-րդ հոդվածի վերնագրում և առաջին պարբերությունում «Հանրաքվեի ընտրատարածքային» բառերը փոխարինել «Ընտրատարածքային» բառով, հաշվի առնելով Օրենքի 9-րդ հոդվածում սահմանված հապավումը:	Ընդունված է
13.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	5-րդ հոդված	1. Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 12-րդ հոդվածի առաջին պարբերությունում, 1-ին, 4-րդ, 7-րդ, 8-րդ և 10-րդ կետերում «ընտրական» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական» բառերով:	Ընդունված է
14.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով լրացվող Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերից «հանրաքվեի» բառը հանել:	Ընդունված է
15.	ՀՀ կառավարություն	5-րդ հոդված	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ հանրաքվեի ընտրատարածքային հանձնաժողովն, ըստ հանրաքվեի տեղամասերի, հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների արձանագրությունների տվյալների հիման վրա հրապարակում է հանրաքվեի նախնական արդյունքները: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ընտրական տեղամասերում	Ընդունված է

			<p>քվեարկության արդյունքների արձանագրությունների հիման վրա ամփոփում է ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները: Իսկ համապետական ընտրությունների դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը աղյուսակավորում է քվեարկության արդյունքները՝ ըստ ընտրական տեղամասերի: Այդ առումով առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ կետը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջներին այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«5) սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգին համապատասխան իրականացնում է քվեարկության արդյունքների աղյուսակավորում.»:</p>	
16.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 13-րդ հոդվածի վերնագրում և առաջին պարբերությունում «Հանրաքվեի տեղամասային» բառերը փոխարինել «Տեղամասային» բառերով, հաշվի առնելով Օրենքի 9-րդ հոդվածում սահմանված հապավումը:	Ընդունված է
17.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	6-րդ հոդված	1. Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 13-րդ հոդվածի առաջին պարբերությունում և 4-րդ կետում «ընտրական» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական» բառերով:	Ընդունված է
18.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետում «հանրաքվեի ընտրատարածքային» բառերը փոխարինել «ընտրատարածքային» բառով:	Ընդունված է
19.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից պատգամավոր Նաիրա Զոհրաբյան,</p>	7-րդ հոդված	<p>Օրենքի նախագծի 7-րդ հոդվածի առկա շարադրանքը ձևակերպել որպես հոդվածի 1-ին մաս, և հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«2. Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով քվեարկության օրը բոլոր տեղամասային կենտրոններում գտնվող քվեարկության սենյակները և տեղամասային կենտրոնին հարող՝ մինչև 50 մետր շառավղով տարածքը տեսանկարահանվում են: Տեսանկարահանումը կատարվում է անընդմեջ՝ ժամը 07:00-ից մինչև քվեարկության արդյունքների ամփոփումը: Հանրաքվեին վստահված անձ ունենալու իրավունք ունեցող միավորների և գրանցված դիտորդական առաքելությունների պահանջով նրանց տրամադրվում են տեսանկարահանված նյութերի կրկնօրինակները: Տեսանկարահանված նյութերը համարվում են հանրաքվեի փաստաթուղթ: Տեսանկարահանված նյութերի կրկնօրինակները տրամադրելու կարգը սահմանում է կենտրոնական</p>	<p>Առաջարկը ներկայացված բովանդակությամբ չի ընդունվել:</p> <p>Չնայած այն բանին, որ տեսանկարահանման գաղափարը, անգամ ոչ բոլոր տեղամասերում, հեղինակների կողմից պաշտպանվում է, սակայն սույն օրենսդրական նախածեռնությամբ իրացման ենթակա չէ, քանի որ այն մի կողմից առնչվում է ընտրական ողջ համակարգին, մյուս կողմից դրանով առաջարկվող</p>

	Ժառանգություն խմբակցություն Պատգամավոր Ռուբիկ Հակոբյան		հանձնաժողովը:»:	մանրամասը իրավակարգավորումները պահանջում են փոփոխություններ նաև այլ օրենքներում: Մինչդեռ ներկայացված օրենսդրական նախաձեռնության նպատակն է ապահովել հանրաքվեի մասին օրենքի համապատասխանությունը ընտրական օրենսգրքին:
20.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մաս):	Ընդունված է: Տես նաև սույն ամփոփաթերթի 31-րդ կետը:
21.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Պետությունը ապահովում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով քարոզչություն կատարողներին դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք քարոզչություն կատարողներին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս):	Ընդունված է
22.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2.1-րդ մասով. «2.1. Հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կենտրոնական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք քարոզչություն կատարողներին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մաս):	Ընդունված է
23.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում «քվեարկությունից» բառը փոխարինել «քվեարկության օրվանից» բառերով (երկու տեղում):	Ընդունված է

24.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>5. Արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝</p> <p>ա) պետական կամ համայնքային ծառայողներին, բացառությամբ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնողների, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.</p> <p>բ) սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին.</p> <p>գ) հանրաքվեի հանձնաժողովի անդամներին.</p> <p>ե) բարեգործական և կրոնական կազմակերպություններին.</p> <p>5) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին:»:</p> <p>(տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մաս):</p>	Ընդունված է, տրվել է նոր շարադրանք
25.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասում ««կողմ» կամ «դեմ»» բառերը փոխարինել ««ԱՅՈ» և «ՈՉ»» բառերով:</p>	Ընդունված է
26.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«9. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման ժամանակ զանգվածային լրատվության միջոցները պարտավոր են նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:</p> <p>Արգելվում է հանրաքվեի անցկացման օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններին կամ հեռուստաընկերություններին հրապարակել հանրաքվեի մասնակիցների հարցման արդյունքներն այն մասին, թե հանրաքվեի դրված հարցին «ԱՅՈ» կամ «ՈՉ» են քվեարկել:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մաս):</p>	Ընդունված է

27.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«10. Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ պարունակեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մաս):</p>	Ընդունված է
28.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 11-րդ մասի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«ա) անանուն քարոզչական նյութեր տարածելը: Անանուն կամ կեղծ քարոզչական նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ հանրաքվեի հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններին՝ ապօրինի գործողությունները դադարեցնելու համար.</p> <p>բ) քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը քարոզչություն կատարողներին արգելվում է քաղաքացիներին ցանկացած եղանակով անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ.» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 11-րդ մաս և 18-րդ հոդվածի 7-րդ մաս):</p>	Ընդունված է
29.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 11-րդ մասի «ե» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«ե) քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը:»:</p>	Ընդունված է
30.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	9-րդ հոդված	<p>«Օրենքի 20-րդ հոդվածի 12-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Սույն հոդվածի 11-րդ մասի «ե» կետի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ հանրաքվեի հանձնաժողովի պահանջից:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մաս):</p>	Ընդունված է
31.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն՝ պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր</p>	9-րդ հոդված	<p>Օրենքի նախագծի 9-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«3. 1-ին մասում «կուսակցությունները» բառից հետո «և» տառը փոխարինել ստորակետով, իսկ «կազմակերպությունները» բառից հետո դնել ստորակետ և լրացնել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով գրանցված դաշինքները» բառերը:»:</p>	<p>Առաջարկությունը ԱԺ խմբակցությունների մասով ընդունվել է և նկատի առնելով օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ ներկայացված այլ առաջարկությունները, որոնք նույնպես առնչվում են հանրաքվեի քարոզչությանը,</p>

	Նաիրա Զոհրաբյան Ժառանգություն խմբակցություն Պատգամավոր Ռուբիկ Հակոբյան			առաջարկվել է նոր շարադրանք:
32.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	10-րդ հոդված	<p>Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» կետի երկրորդ նախադասությունը հանել, քանի որ նշված դրույթը նպատակահարար է տարածել 21-րդ հոդվածի 4-րդ մասի բոլոր կետերի վրա, իսկ 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5.1-րդ մաս.</p> <p>«5.1. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված անձանց՝ հիմնադրամների հաշվին մուծած գումարները, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափը գերազանցող մուծումները փոխանցվում են պետական բյուջե:»:</p>	Ընդունված է
33.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	11-րդ հոդված	<p>Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«գ) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունները.» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):</p>	Ընդունված է
34.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	11-րդ հոդված	<p>Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ մասով.</p> <p>«2.1. Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ հանրաքվեի վերաբերյալ զեկույցները տեղադրվում են կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում:» (տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մաս):</p>	Ընդունված է
35.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	13-րդ հոդված	<p>Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 25. Հանրաքվեի քվեաթերթիկը, քվեարկության ծրարը, կնիքները և քվեատուփը</p> <p>1. Հանրաքվեի քվեաթերթիկի նմուշը, ձևը և շարադրանքը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը:</p> <p>2. Քվեարկության ժամանակ յուրաքանչյուր քաղաքացի ստանում է մեկական քվեաթերթիկ և քվեարկության ծրար: Միաժամանակ երկու և ավելի հարցի</p>	Ընդունված է և նկատի առնելով վստահված անձի ինստիտուտի ներմուծումը կատարվել են որոշ լրացումներ (տես հոդվածը):

		<p>վերաբերյալ հանրաքվե անցկացնելու դեպքում քաղաքացիներին տրվում են հանրաքվեի դրված հարցերի թվին համապատասխան թվով քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ: Քվեաթերթիկները և ծրարները պատրաստվում են այնպես, որ ակնհայտորեն տարբերվեն միմյանցից:</p> <p>3. Քվեաթերթիկը պետք է լինի դակված (պերֆորացված), պարունակի քվեարկության օրը, ամիսը, տարեթիվը, տպագրատան անվանումը և ծանուցում՝ քվեաթերթիկի լրացման կարգի մասին: Քվեաթերթիկները պետք է պատրաստված լինեն անթափանց թղթից:</p> <p>Քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում են քվեաթերթիկի հերթական համարը, իսկ հատման գծից ներքև՝ «ԱՅՈ» և «ՈՉ» բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով:</p> <p>Քվեաթերթիկները տեղամասային հանձնաժողովներին հատկացվում են տեղամասում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվի մինչև 3 տոկոս ավելի քանակով՝ քվեարկության նախորդ օրը, բայց ոչ պակաս, քան հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց թվից 2 քվեաթերթիկ ավելին:</p> <p>4. Քվեաթերթիկների տպագրումն ապահովում է կենտրոնական հանձնաժողովը: Քվեաթերթիկները տպագրվում են հանրաքվեի անցկացման օրվանից ոչ շուտ, քան 10, և ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ լիազոր մարմնի ընտրողների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 10 օր առաջ տրամադրած տեղեկատվության հիման վրա:</p> <p>5. Քվեարկության ծրարների պատրաստումն ապահովում է կենտրոնական հանձնաժողովը: Քվեարկության ծրարները տեղամասային հանձնաժողովին հատկացվում են քվեարկության նախորդ օրը:</p> <p>6. Հանրաքվեի հանձնաժողովների կնիքների, դրոշմակնիքի և տեղամասային հանձնաժողովի անդամների անհատական կնիքների նմուշները հաստատում է կենտրոնական հանձնաժողովը: Դրանք պատրաստվում են կենտրոնական հանձնաժողովի պատվերով:</p> <p>7. Տեղամասային հանձնաժողովի անդամը կարող է ունենալ սեփական դրոշմ, սակայն այն ունենալը պարտադիր չէ: Տեղամասային հանձնաժողովի անդամը սեփական դրոշմը կարող է օգտագործել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում իր ստորագրության փոխարեն:</p> <p>8. Հանրաքվեի քվեաթերթիկները, քվեարկության ծրարները և կնիքները հանձնելու, ինչպես նաև կնիքները վերադարձնելու կարգը սահմանվում է սույն օրենքով և</p>	
--	--	--	--

			<p>Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով:</p> <p>9. Քվեատուվի նմուշը (չափսերը) հաստատում է կենտրոնական հանձնաժողովը: Տեղամասային կենտրոնում կարող են օգտագործվել մեկից ավելի քվեատուվեր՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով:»:</p>	
36.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից պատգամավոր Նաիրա Զոհրաբյան</p>	14-րդ հոդված	<p>Օրենքի նախագծի Հոդված 14-ի՝ «Հոդված 28. Քվեաթերթիկը լրացնելու կարգը» հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունում «հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց» բառերը փոխարինել «իր հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթը հանձնաժողովի նախագահին ներկայացնելուց» բառերով:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ մի կողմից այս փոփոխությունը պետք է վերաբերի ընտրական բոլոր մակարդակներին, մինչդեռ կատարվում է փոփոխություն միայն հանրաքվեի մասին օրենքում, մյուս կողմից անհասկանալի է թե ինչպես պետք է հաստատվի նշված հոդվածով սահմանված դեպքի՝ քվեարկությունն ինքուրույն լրացնելու հնարավորություն չունենալը, հաշմանդամության այս կամ այն խմբի կարգավիճակը հաստատող փաստաթղթի հետ կապը, կամ ինչ փաստաթուղթ է դա՝ վկայական, որտեղ չկա հաշմանդամության պատճառահետևանքային կապի մասին նշում, թե այլ փաստաթուղթ: Բացի այդ, կարող են լինել դեպքեր, երբ ակնհայտ է, որ անձը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, սակայն այդ սահմանափակումը ժամակավոր է, օրինակ՝ որոժակի վնասվածքի պատճառով կամ չունի հաշմանդամության կարգավիճակ, մինչդեռ այս դրույթի ներառմամբ մենք կսահմանափակենք նրա՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը:</p>

<p>37.</p>	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Զոհրաբյան,</p> <p>Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյան</p>	<p>14-րդ հոդված</p>	<p>Օրենքի նախագծի Հոդված 14-ի՝ «Հոդված 28. Քվեաթերթիկը լրացնելու կարգը» հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «հանձնաժողովի անդամ» բառից հետո ավելացնել «վստահված անձ» բառերը:</p>	<p>Ընդունվել է:</p>
<p>38.</p>	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Զոհրաբյան</p>	<p>14-րդ հոդված</p>	<p>2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.</p> <p>«Տեսողության խնդիրներ ունեցող անձանց հնարավորություն է ընձեռնվում ինքնուրույն օգտվելու հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող խոշորացույցից: Տեղամասային հանձնաժողովին խոշորացույցը տրամադրում է ընտրատարածքային հանձնաժողովը՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով:»</p>	<p>Չի ընդունվել, քանի որ նախ սա վերաբերում է ընտրական իրավունքի իրացման պայմաններին, որը վերաբերում է բոլոր ընտրություններին, ոչ միայն հանրաքվեին, հետևաբար կանոնակրգունը պետք է դիտարկել համընդհանրության ներքո: Մյուս կողմից առաջարկվող ձևակերպումը պահանջում է առավել մանրամասն իրավակարգավորում և փոփոխություններ այլ օրենքներում, ինչը դուրս է ներկայացված օրենսդրական նախաձեռնության կարգավորման շրջանակներից: Այնուամենայնիվ, գափարը քննարկման է ենթակա ընտրական օրենսդրության ամբողջական վերանյման</p>

				շրջանակներում:
39.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածով լրացվող Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասում, 29-րդ հոդվածի 4-րդ մասում, 32-րդ հոդվածի 2-րդ մասում, 35-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերում «ընտրական» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ընտրական» բառով:	Ընդունված է
40.	ՀՀ կառավարություն, Պատգամավոր Հովհաննես Սահակյան	14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածով լրացվող Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «ընտրական» բառը փոխարինել «տեղամասային» բառով:	Ընդունված է
41.	Պատգամավոր Հովհաննես Մարգարյան	14-րդ հոդված	14-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 35-րդ հոդվածի վեաշարադրումը չիրականացնել, այլ թողնել գործող իրավակարգավորումը, որը նախատեսում է հանրաքվեի արդյունքների ամփոփման դեպքում 3 հնարավոր որոշումների ընդունումը, ինչպես նաև ՍԴ դիմելու հնարավորությունը թողնել 7 օրյա ժամկետը:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ նախածով առաջարկվող օրենքի 35-րդ հոդվածով սահմանվում է այն դեպքը, երբ կենտրոնական հանձնաժողովը հանրաքվեի արդյունքները ամփոփելուց հետո՝ նկատի առնելով դիմում-բողոքները կարող է առանձին տեղամասերում հանրաքվեի արդյունքները ձանաչել անվավեր: Ինչը նշանակում է, որ այդ տեղամասերում նոր քվեարկություններից հետո միայն կենտրոնական հանձնաժողովը կարող է անդրադարձնալ հանրաքվեի ընդհանուր արդյունքներին: Այս հնարավորությունը նախատեսված է Ընտրական օրենսգրքով՝ համապետական ընտրությունների համար: Նույնը վերաբերում է նաև ՍԴ դիմելու ժամկետին՝ այն սահմանվել է նկատի առնելով ընտրական օրենսգրքի համանման կարգավորումը:

42.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	15-րդ հոդված	Նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունում «սահմանադրական դատարանի որոշումից» բառերը փոխարինել «հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումն ուժի մեջ թողնելու կամ հանրաքվեի դրված նախագիծը ընդունված համարելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումից» բառերով, քանի որ սահմանադրական դատարանը կարող է նաև անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը, և հանրաքվեի դրված նախագիծը համարել չընդունված կամ անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքները (տես՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մաս):	Ընդունված է
43.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	Նոր հոդված	<p>Օրենքի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 27. Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերում քվեարկության կազմակերպումը</p> <p>Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերում քվեարկության կազմակերպում է շրջիկ արկղի միջոցով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:»:</p> <p>(տես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 61-րդ հոդված)</p>	Չի ընդունվել, հաշվի առնելով, որ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգն ապահովում է «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի կատարումը:
44.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը մասնակիորեն (բացառությամբ հաշվառումից հանելու առաջարկի) միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, ժառանգություն</p>	Նոր հոդված	<p>«Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.</p> <p>Հոդված 17. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ռեգիստրը վարելը, քաղաքացիների ցուցակները կազմելու կարգը</p> <p>1. Հայաստանի Հանրապետության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների՝ ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, վերջին մեկ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:</p> <p>Սույն օրենքի իմաստով տարիներով արտահայտված որևէ ժամանակահատված Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվել նշանակում է՝ այդ ժամանակահատվածը կազմող յուրաքանչյուր տարվա ընդհանուր հաշվով կեսից ավելին գտնվել Հայաստանի Հանրապետությունում:</p> <p>Հայաստանի Հանրապետությունից վեց ամսվանից ավելի ժամկետով անընդմեջ բացակայող քաղաքացիները լիազոր մարմնի նախաձեռնությամբ անմիջապես հանվում են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հաշվառումից,</p>	Չի ընդունվել սույն օրենսդրական նախաձեռնության մեջ, սակայն հեղինակները գտնում են, որ առաջարկը քննարկման է ենթակա ընտրական ողջ համակարգի վերնայման շրջանակներում: Բացի այդ, առաջարկը կարիք ունի լրացուցիչ օրենսդրական մանրամասնեցման, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքից ելնելով՝ նաև համադրման այլ իրավակարգավորումների հետ: Մասնավորապես ՀՀ սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու

<p>խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյան</p>			<p>բնակչության պետական ռեգիստրում պահպանելով նրանց անհատական հաշվառման տվյալները: Նշված քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո, տասնօրյա ժամկետում ավտոմատ կարգով վերականգնվում են Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում նրանց հաշվառման տվյալները:</p> <p>Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիները Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում չեն ընդգրկվում, որը չի սահմանափակում ընտրողների ցուցակում ընդգրկված լինելու նրանց իրավունքը:</p> <p>2. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:</p> <p>3. Սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զինվորական մասերի հրամանատարները:</p> <p>4. Լիազոր մարմինը տարին 2 անգամ հունիսին եւ նոյեմբերին (առաջին մեկ շաբաթվա ընթացքում), իսկ հանրաքվե նշանակված լինելու դեպքում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ, Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը՝ ըստ համայնքների և ըստ ընտրական տեղամասերի, էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է կենտրոնական հանձնաժողով՝ կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման և ներբեռնելու հնարավորությամբ տեղադրելու համար: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքի մշտական եւ անբաժանելի մասն է:</p> <p>5. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներին առաջադրվող պահանջները, ցուցակներում ընդգրկելու, ցուցակների անձշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելու և ցուցակները ճշտելու կարգը, հանձնաժողովներին ցուցակներ տրամադրելը սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի երկրորդ գլխում համապետական ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակների վարելուն, քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկելուն, ընտրողների ցուցակներին առաջադրվող պահանջներին, ցուցակների անձշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելուն, ցուցակները ճշտելուն և հանձնաժողովներին ցուցակները</p>	<p>և հանրաքվեներին մասնակցելու, ... իրավունք:</p> <p>Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը: Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները: Այս սահմանման ներքո, մեր կարծիքով անձի ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը պետք է լինի նույնական: Մինչդեռ, եթե փոփոխություն է կատարվում Հանրաքվեի մասին օրենքում առանց անդրադառնալու ընտրական օրենսգրքի նույնատիպ հարցի իրավական կարգավորումներին, ապա կստացվի տարբերակված մոտեցում անձի ընտրելու իրավունքի իրացման հարցում: Բացի այդ, «Հանրաքվեի մասին օրենքում փոփոխությունների և լրացումների հիմնական նպատակներից մեկը «Հանրաքվեի մասին» օրենքի կանոնակարգումների ներդաշնակեցումն է ՀՀ ընտրական օրենսգրքի</p>
---	--	--	---	--

			<p>տրամադրելուն վերաբերող դրույթներով սահմանված կարգով:»:</p>	<p>կանոնակարգումների հետ: Այսինքն, ունենալ գործող օրենք, որն ընտրական գործող օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան թույլ կտա ապահովելու երկու իրավական ակտերի միջև կանոնակարգումների միասնականությունը (այսօր ինչպես համապետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները ու տեղական հանրաքվեները իրականացվում են ընտրողների այն ցուցակներով, որոնք կազմվում են ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան): Լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի առաջրկվող այն մոտեցումը, ըստ որի ընտրողների ռեգիստրում պետք է ընդգրկվեն Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, վերջին մեկ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Հարց է առաջնում. ինչու պետք է անձը մեկ տարի մշտապես բնակվի հանրապետությունում որպեսզի ընդգրկվի ընտրողների ռեգիստրում: Բացի այդ, լրացուցիչ իրավական</p>
--	--	--	---	--

				<p>հիմնավորման անհրաժեշտություն է առաջանում այն դեպքում, երբ առաջարկվում է անձին՝ առանց իր համաձայնության հանել հաշվառումից, առավել ևս այն դեպքում, երբ տվյալ անձը հաշվառված է իր սեփականությունը հանդիսացող բնակարանում կամ տանը:</p> <p>Լրացուցիչ հիմնավորումների և իրավակարգավորումների անհրաժեշտություն կա նաև տարիներով արտահայտված որևէ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակված լինելու վերաբերյալ արված առաջարկության առնչությամբ: Առաջարկն այս տեսքով ընդունելու դեպքում, օրինակ կարող է ստացվել այնպես, որ մեկ տարված վերջին հինգ ամիսը և հաջորդող տարվա առաջին հինգ ամիսը բացակայող անձը /հանրագումարում 10 ամիս/ համարվի մշտապես բնակվող, իսկ կոկրետ մեկ տարվա մեջ 6 ամիս և մեկ օր բացակայողը համարվի մշտապես չբնակվող: Այսինքն, ակնհայտ է, որ այս նոր մետեցումները՝ ներկայացված ձևակերպումներով բազմաթիվ հարցադրումներ են առաջացնում (այդ թվում՝ անվտանգության առումով) և բնականաբար այս փուլում կամ մշված նախագծի համատեքստում չեն կարող իրացվել:</p>
--	--	--	--	---

<p>45.</p>	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Ջուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից պատգամավոր Նաիրա Ջոիրաբյան,</p> <p>Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյան</p>	<p>Սոր հոդված</p>	<p>«Օրենքը լրացնել նոր հոդվածով՝</p> <p>Հոդված 17.1. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակների մատչելիությունը</p> <p>1. Հայաստանի Հանրապետության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակը, ինչպես նաև ընտրողների ստորագրած ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում կազմվող ցուցակների, ազատ է ծանոթության համար:</p> <p>2. Ընտրողների ստորագրած ցուցակների լուսապատճենները քվեարկության հաջորդ օրը տեղամասային հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Ընտրողների ստորագրած ցուցակների լուսապատճենները քվեարկությունից հետո երկու օրվա ընթացքում տեղադրվում են նաև կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում: Այս ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված, իսկ համացանցային կայքում տեղադրված՝ 15 օր: Ընտրողների ստորագրած ցուցակները տեղամասային կենտրոնում փակցնելու, ինչպես նաև կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու կարգը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը:</p> <p>3. Հանրաքվեի ժամանակ լիազոր մարմինն ընտրողների ցուցակը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր և 2 օր առաջ տեղադրում է համացանցում: Համացանցում ըստ տեղամասերի տեղադրված ընտրողների ցուցակները պետք է ունենան դրանք ներբեռնելու հնարավորություն:</p> <p>4. Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը քվեարկության օրվանից 40 օր առաջ ընտրողների ցուցակը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում:</p> <p>5. Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, քվեարկության օրվանից 2 օր առաջ տեղամասային հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Այս ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված մինչև հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը:</p> <p>6. Ջինվորական մասերում հաշվառված ընտրողների ցուցակները քվեարկության օրվանից 10 օր առաջ փակցվում են զորամասերում՝ զինծառայողների համար տեսանելի տեղում:</p> <p>7. Համայնքում մեկից ավելի հանրաքվեի տեղամաս կազմավորվելու դեպքում, լիազոր մարմինն ընտրողներին ուղարկում է ծանուցագրեր՝ քվեարկության օրվա, հանրաքվեի տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին,</p>	<p>Ներկայացված ձևակերպմամբ առաջրկությունը չի ընդունվել:</p> <p>Առաջրկվող հոդվածը կրկնում է ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի դրույթները այն բացառությամբ, որը վերաբերում է ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակմանը:</p> <p>Լինելով ստորագրված ցուցակների հրապարակման գաղափարի կրող, հեղինակները այն դիտում են, որպես ընտրությունների նկատմամբ հանրային վստահության և վերահսկողության մակարդակի բարձրացման կարևորագույն միջոց:</p> <p>Միաժամանկ հարկ է նշել, որ այն պետք է վերաբերի ընտրությունների բոլոր մարակարողակներին, հիմնավորված և ընկալելի լինի ընրտական գործընթացի մասնակիցների համար՝ թե իրավական, քաղաքական և թե նաև տեխնիկական ապահովման տեսանկյունից:</p> <p>Զնայած Վենետիկի հանձնաժողովը բազմիցս արտահայտվել է ստորագրված ցուցակների հրապարակման անթույլատրելիության մասին,</p>
------------	--	-------------------	---	---

		<p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ:»</p>	<p>որպես քվեարկության գաղտնիության սկզբունքի խախտում, մեր կարծիքով ստորագրված ցուցակների մատչելիության աստիճանի բարձրացմանն ուղղված ստորագրված ցուցակների հրապարակման առաջարկը չի կարող կտրականապես մերժվել՝ առանց համարժեք այլ մեխանիզմի գործադրման:</p> <p>Հատկանշական է, որ այս հարցին անդրադառնալով ՀՀ ՍԴ-ն իր 2012թ. մայիսի 5-ի ՍԴՈ-1027 որոշմամբ նշել է, որ սահմանադրաիրավական առումով "հրապարակման ենթակա չեն" կամ "չպետք է հրապարակվի" արտահայտություններին իրավակիրառական պրակտիկայում չի կարող այնպիսի տարածական մեկնաբանություն տրվել, ինչը կխոչընդոտի ազատ ընտրությունը կամ կարգելափակի ընտրողների ստորագրած ցուցակների ուսումնասիրության հնարավորությունը՝ ընտրական իրավունքի պաշտպանության համատեքստում, ինչպես նաև դրանց չհրապարակման սահմանափակումը որեւէ կերպ</p>
--	--	---	--

				<p>տարածվի նման տեղեկությունները դատարաններին տրամադրելովրա: Տվյալ արտահայտությունները վերաբերում են հրապարակային տպագրությանը՝ քվեարկության գաղտնիության երաշխավորման եւ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համատեքստում: Սակայն որեւէ սահմանափակում չի կարող խոչընդոտել ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով սահմանված կարգով մասնակցող իրավասուբյեկտների գործունեությունը, ինչի արդյունավետ իրականացումով է մեծապես պայմանավորված հանրային վստահությունն ընտրական գործընթացի հանդեպ:</p> <p>Առ այդ, կարևորելով ներկայացված առաջարկության մեջ ստորագրված ցուցակների մատչելիության աստիճանի բարձրացման հարցը, գտնում ենք, որ այն քննարկամ պետք է ենթարկվի ընտրական համակարգի ամբողջական վերանայման համատեքստում, առավել ևս որ առաջարկվող</p>
--	--	--	--	--

				մոտեցումը իրենում պարունակում է այնպիսի տեխնիկական լուծումներ, որոնց գործնական իրականացումը կարող է չափահովվել:
46.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն՝ պատգամավոր Լևոն Ջուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Ջոհրաբյանը,</p> <p>Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը</p>	Սոր հոդված	<p>«Օրենքը լրացնել նոր հոդվածով.</p> <p>Հոդված 20.1. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչություն կատարելու համար գրանցվելը</p> <p>1. Առնվազն տասը կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ կարող են ձևավորել հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչություն կատարող միավորներ՝ դաշինքներ (այսուհետև՝ Դաշինքներ): Դաշինքում ընդգրկված կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները չեն կարող ընդգրկվել այլ Դաշինքում:</p> <p>Դաշինքից որևէ կուսակցության կամ հասարակական կազմակերպության դուրս գալու դեպքում, Դաշինքի վերագրանցում չի պահանջվում:</p> <p>Դաշինքներ կազմավորելիս կիրառվում են սույն օրենքով նախատեսված սահմանափակումները:</p> <p>2. Դաշինքները և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունները (այսուհետև՝ Խմբակցություններ) կարող են գրանցվել կենտրոնական հանձնաժողովում՝ որպես հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարող միավորներ:</p> <p>3. Դաշինքները և Խմբակցությունները՝ որպես հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարող միավորներ, կենտրոնական հանձնաժողովում գրանցվելու դիմումը (այսուհետև՝ դիմում) ներկայացնում են.</p> <p>1) Դաշինքները՝ անդամ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների մշտապես գործող մարմինների որոշումների հիման վրա, իսկ դիմումը ստորագրում են Դաշինքի անդամ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարները,</p> <p>2) Խմբակցությունները՝ Խմբակցությունների որոշումների հիման վրա, իսկ դիմումը ստորագրում են Խմբակցությունների ղեկավարները:</p>	<p>Առաջարկն ընունվել է քարոզչության ապահովման մասով՝ կապակցելով այն օրենքի 20-րդ հոդվածով առաջրկվող քարոզչական այն սուբյեկտներին վերապահված իրավունքների հետ, որոնք երաշխավորում են ՀՀ ԱԺ խմբակցությունների կամ պատգամավորական խմբերի համամար հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ անվճար և վճարովի քարոզչական եթերի տրամադրումը: Առ այդ, Օրենքի 20-րդ հոդվածում հեղինակները ի լրումն դրա առաջին մասի առաջրկում են 3.1 մասը, որի համաձայն</p> <p>«3.1 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն (պատգամավորական խումբ), ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողը իրավունք ունեն՝</p> <p>ա) անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի</p>

		<p>4. Դաշինքի դիմումին կցվում են՝</p> <p>1) Դաշինքում ընդգրկված կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների կանոնադրությունները,</p> <p>2) Դաշինքի անդամ կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների մշտապես գործող մարմինների որոշումները Դաշինք կազմավորելու և «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն իրականացնելու վերաբերյալ,</p> <p>3) մինչև երկու լիազոր ներկայացուցչի տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը):</p> <p>5. Խմբակցության դիմումին կցվում են՝</p> <p>1) Խմբակցության կանոնադրությունը,</p> <p>2) Խմբակցության որոշումը՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն իրականացնելու վերաբերյալ,</p> <p>3) մինչև երկու լիազոր ներկայացուցչի տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը):</p> <p>6. Գրանցման դիմումը կենտրոնական հանձնաժողով ներկայացվում է միայն Դաշինքի կամ Խմբակցության լիազոր ներկայացուցչի միջոցով՝ հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից հետո տասնօրյա ժամկետում:</p> <p>7. Դաշինքի կամ Խմբակցության դիմումը գրանցելու համար ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում, կենտրոնական հանձնաժողովը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:</p> <p>Հանձնաժողովն իրավունք չունի չընդունելու ներկայացված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ: Սույն մասի դրույթները չեն կիրառվում փաստաթղթերում տեղ գտած այնպիսի սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ շտկելու կամ այլ թերություններ վերացնելու նկատմամբ, որի իրավունքը օրենքով վերապահված է այդ փաստաթղթերն ընդունած կամ տրամադրած մարմիններին:</p>	<p>Եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե.</p> <p>բ) վճարովի հիմունքներով օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 180 րոպե՝ քարոզչության հիմնադրամի միջոցների հաշվին:</p> <p>Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության եթերաժամերից կարող են օգտվել սկսած քվեարկության օրվանից 30 օր առաջ:</p> <p>Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններին, պատգամավորական խմբերին, ինչպես նաև հանրաքվե նախաձեռնողին վճարովի և անվճար եթերաժամը տրամադրվում է խմբակցության ղեկավարի կողմից եթերաժամ տրամադրողին ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա:</p> <p>Անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանում</p>
--	--	---	--

		<p>Ներկայացված փաստաթղթերում սույն մասով նշված անձնությունների կամ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի թերի լինելու դեպքում, կենտրոնական հանձնաժողովը 48 ժամ է տալիս նշված անձնությունները վերացնելու, կից ներկայացված փաստաթղթերը լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում Դաշինքի կամ Խմբակցության դիմումի անձնությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում, Դաշինքի կամ Խմբակցության դիմումը մերժվում է:</p> <p>8. Կենտրոնական հանձնաժողովի անդամների կողմից Դաշինքի կամ Խմբակցության դիմումի գրանցման վերաբերյալ առարկություն չլինելու դեպքում, դիմումը գրանցվում է առանց քվեարկության:</p> <p>Գրանցման համար սահմանված ժամկետը ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, կենտրոնական հանձնաժողովը հրապարակում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈՒ» կամ «ՈՉ» քարոզչություն իրականացնող Դաշինքների և Խմբակցությունների ցուցակը:</p> <p>9. Դաշինքի կամ Խմբակցության գրանցման դիմումը քննարկելիս կենտրոնական հանձնաժողովի նիստին իրավունք ունի ներկա լինելու լիազոր ներկայացուցիչը:</p> <p>10. Կենտրոնական հանձնաժողովը մերժում է Դաշինքի կամ Խմբակցության գրանցման դիմումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են կամ կեղծված:</p> <p>Դաշինքի կամ Խմբակցության գրանցման դիմումը մերժվում է կենտրոնական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:</p> <p>11. Դաշինքի կամ Խմբակցության գրանցումը կենտրոնական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե.</p> <p>1) Դաշինքում ընդգրկված կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների թիվը նվազել է երկուսից,</p> <p>2) Դաշինքը կամ Խմբակցությունը ներկայացրել է դիմում գրանցումը դադարեցնելու մասին:</p> <p>12. Դաշինքի կամ Խմբակցության գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին կենտրոնական հանձնաժողովի որոշումների բողոքարկումը կատարվում է կուսակցության ընտրական ցուցակի կամ դրանում ընդգրկված թեկնածուի գրանցումը մերժելու, անվավեր ճանաչելու մասին որոշումների բողոքարկման համար Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով»:</p>	<p>է կենտրոնական ընտրական հանձնաժողովը եթերաժամ տրամադրելու համար սահմանված ժամկետից առնվազն 5 օր առաջ:</p> <p>Ջանգվածային լրատվության միջոցներով իրականացվող քարոզչության նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների նախընտրական քարոզչության համար սահմանված կանոնները:»:</p>
--	--	---	---

<p>47.</p>	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն պատգամավոր Լևոն Ջուրաբյան</p> <p>Առաջարկությունը միացել են նաև՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից պատգամավոր Նաիրա Ջոհրաբյանը,</p> <p>Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը</p>	<p>Նոր հոդված</p>	<p>«Օրենքը լրացնել նոր հոդվածով, հետևյալ բովանդակությամբ.</p> <p>Հոդված 20.2. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչությունը գանգվածային լրատվության միջոցներով</p> <p>1. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչությունը հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ կատարվում է հավասար հիմունքներով և անվճար:</p> <p>«ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար հանրային հեռուստատեսության եթերաժամից օրական տրամադրվում է մինչև 30-ական րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ մինչև 40-ական րոպե:</p> <p>2. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն օրենքով սահմանված կարգով գրանցված միավորներն ունեն հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության եթերաժամերից հավասար պայմաններով օգտվելու իրավունք: Ընդ որում, «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով նախատեսված եթերաժամերի կեսը տրամադրվում է Դաշինքներին, կեսը՝ խմբակցություններին:</p> <p>3. Սույն հոդվածի 1-ին մասով հանրային հեռուստատեսությամբ նախատեսված եթերաժամը տրամադրվում է ժամը 20.00-ից մինչև 24.00-ն ընկած ժամային միջակայքում:</p> <p>4. Հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն օրենքով սահմանված կարգով գրանցված միավորներին անվճար եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը՝ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու գրանցման համար սույն օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը:</p> <p>5. Հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության լրատվական հաղորդումներում հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու քարոզարշավի վերաբերյալ ներկայացվում է անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն:</p> <p>«ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն օրենքով սահմանված կարգով գրանցված միավորների կողմից միջոցառումներ չկազմակերպելը կամ այդ միջոցառումների մասին տեղեկատվության բացակայությունը հիմք չէ գանգվածային լրատվության միջոցի համար ընտրությունների մյուս մասնակիցների քարոզարշավի</p>	<p>Առաջարկությունը մասնակիորեն ընդունվել է այլ ձևակերպմամբ՝ տես 46-րդ կետը:</p> <p>Միաժամանակ հանրաքվեի քարոզչական քաղաքականությունը համապատասխանեցվել է համապետական ընտրությունների ժամանակ նույատիպ հարաբերությունների իրավակարգավորումներին որոնք սահմանված են ընտրական օրենսգրքով (տես նաև 20-րդ հոդվածի այլ կարգավորումների վերաբերյալ հեղինակների առաջարկած ձևակերպումները):</p>
------------	---	-------------------	---	--

		<p>մասին տեղեկություններ չհրապարակելու համար:</p> <p>6. Հանրաքվե նշանակելուց ոչ ուշ, քան 10 օր հետո քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս ռադիոընկերությունները և հեռուստաընկերությունները՝ անկախ սեփականության ձևից, հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը, որը չի կարող գերազանցել մինչև ընտրությունների նշանակումը վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին գինը և մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:</p> <p>Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները հավասարապես տարածվում են նաև քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների վրա:</p> <p>7. Արգելվում է հանրաքվեի քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումներն ընդմիջել ապրանքների կամ ծառայությունների գովազդով:</p> <p>8. Հանրաքվեի քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:</p> <p>9. Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից հանրաքվեի քարոզչության սահմանված կարգի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը:</p> <p>10. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում իրականացնում է վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար հավասար պայմանների ապահովման գնահատման մշտադիտարկում (մոնիթորինգ): Այդ նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը մշակում և հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 10 օր հետո հրապարակում ու կենտրոնական հանձնաժողով է ներկայացնում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն օրենքով սահմանված կարգով գրանցված միավորների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:</p>	
--	--	---	--

			<p>11. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հանրաքվեի ժամանակ, ոչ ուշ, քան հանրաքվեի քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ հրապարակում և կենտրոնական հանձնաժողով է ներկայացնում վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում սույն հոդվածի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից հանրաքվեի քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:</p> <p>12. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած թերթերը և ամսագրերը հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն օրենքով սահմանված կարգով գրանցված միավորների համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:»:</p>	
48.	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն՝ պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը,</p> <p>Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը</p>	Նոր հոդված	<p>«Օրենքը լրացնել նոր հոդվածով.</p> <p>Հոդված 20.3. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառների և քարոզչական տպագիր նյութերի օգտագործման կարգը</p> <p>1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառների և քարոզչական տպագիր նյութերի օգտագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով»:</p>	<p>Առաջարկությամբ բարձրացված հարցը համադրվել է նաև օրենքի 20-րդ հոդվածի վերաբերյալ արված այլ առաջարկությունների հետ և իրացվել է օրենքի 20-րդ հոդվածում ապահովելով ընտրական օրենսգրքով սահմանված նույնատիպ իրավակարգորումը:</p>
49.	ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն՝ պատգամավոր	Նոր հոդված	<p>«Օրենքի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.</p> <p>«ԳԼՈՒԽ 6. Դիտորդները, Դաշինքների վստահված անձինք, Զանգվածային</p>	Իրացվել է 50-րդ կետին համապատասխան:

	<p>Լևոն Զուրաբյան, Առաջարկությանը միացել են՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը</p>		<p>լրատվության միջոցները»:</p>	
<p>50.</p>	<p>ՀՀ ԱԺ ՀԱԿ խմբակցություն՝ պատգամավոր Լևոն Զուրաբյան</p> <p>Առաջարկությանը միացել են՝</p> <p>ԲՀԿ խմբակցությունից՝ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, Ժառանգություն խմբակցություն՝</p> <p>Պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը</p>	<p>Նոր հոդված</p>	<p>«Օրենքը լրացնել նոր հոդվածով.</p> <p>Հոդված 23.1. Վստահված անձի կարգավիճակը</p> <p>Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ «ԱՅՈ» կամ «ՈՉ» քարոզչություն կատարելու համար սույն օրենքով սահմանված կարգով գրանցվելուց հետո, Դաշինքները հանրաքվեի հանձնաժողովներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք:</p> <p>Հանրաքվեի ժամանակ վստահված անձանց կարգավիճակը, գրանցումը, լիազորությունները, իրավունքները, պարտականությունները եւ գործունեության երաշխիքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով»:</p>	<p>Ընդունվել է այլ ձևակերպմամբ՝ իրացվելով դիտորդներին վերաբերող հոդվածում:</p>
<p>51.</p>	<p>Պատգամավոր Վահրամ Մկրտչյան</p>	<p>Նոր հոդված</p>	<p>Ներկայացված օրենքի նախագիծը առաջարկում է մի շարք նոր կանոնակարգումներ, որը ողջունելի է, սակայն կան մի քանի խնդիրներ, որոնք ունեն կարևոր նշանակություն քաղաքացիների՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքի իրացումն լիակատար ապահովելու տեսանկյունից, որի կապակցությամբ էլ</p>	<p>Չի ընդուննվել, սույն օրենսդրական նախաձեռնության ներքո իրացնելու շրջանակներում: Կարևորելով և արժեքավոր համարելով</p>

		<p>առաջարկվում են հետևյալ լրացումները:</p> <p>Գաղտնիք չէ, որ քվեարկության օրը բազմաթիվ քաղաքացիներ հիվանդության կամ հաշմության պատճառով ուղղակի ի վիճակի չեն ներկայանալ ընտրական տեղամասեր: Խոսքը այն քաղաքացիների մասին է, որոնք իրենց բուժումը ստանում են տանը և ոչ թե ստացիոնար բուժփմնարկներում:</p> <p>Ավելին, մենք բազմիցս խոսել ենք հաշմանդամների իրավունքների պաշտպանության մասին: Քվեարկության օրը նշված քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար թեքահարթակներով տեղամասերի ձևավորումը ինչ խոսք որոշակի առումով ապահովում է մատչելիություն, սակայն մինչև տեղամասային կենտրոն հասնելը, անձը պետք է անցնի որոշակի ճանապարհ՝ այսինքն դուրս գա բնակարանից, օգտվի վերելակից, գուցե նաև տրանսպորտային միջոցից և այլն: Իհարկե, այս կապակցությամբ արվում է աշխատանք, սակայն լիակատար մատչելիության ապահովումը ոչ մեկ օրվա և ոչ էլ մեկ տարվա գործ է, հատկապես եթե նկատի ունենանք, որ ժամանակին մեզանում անտեսված են եղել նշված խնդիրները և որևէ շինություն կամ շենք նախագծելիս ու կատուցելիս շրջանցվել են նշված խնդիրները:</p> <p>Կարևորելով նշված հիմնահարցը և նպատակ հետապնդելով ապահովելու Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների՝ քվեարկության մասնակցության իրավունքի իրացման ապահովումը առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր 12.1 հոդվածով՝</p> <p>«Հոդված 12.1. Օրենքը լրացնել նոր 24.1 հոդվածով հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 24.1. Առանձին քաղաքացիների քվեարկության մասնակցության կարգը</p> <p>Քվեարկության օրը՝ հիվանդության կամ հաշմանդամության պատճառով տեղամասային կենտրոն ներկայանալու հնարավորությունից զրկված անձինք կարող են քվեարկությանը մասնակցել տանը՝ շրջիկ արկղի միջոցով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի մեկ անդամն ընտրական տեղամասի սահմաններում շրջիկ արկղի միջոցով կազմակերպում է քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների քվեարկությունը: Շրջիկ արկղը կարող են ուղեկցել դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:</p> <p>Նշված քաղաքացիների ցուցակը կազմում է տեղամասային ընտրական հանձնաժողովը քաղաքացիներից ստացված դիմումների հիման վրա: Շրջիկ արկղով քվեարկությունը կազմակերպվում է քվեարկության օրը ժամը 18.00-20.00-ն:</p> <p>Շրջիկ արկղով քվեարկությունն անցկացվում է քվեարկության գաղտնիության</p>	<p>առաջարկը, հեղինակները գտնում են, որ այն ենթակա է քննարկման, լրացուցիչ իրավակարգավորումների համալրմամբ ընդունման ընտրական համակարգի ամբողջական վերանայման դեպքում և ժամանակ: Ներկա նախաձեռնությունը առնչվում է հանրաքվեի գործող օրենքի դրույթները ընտրական օրենսգրքին համապատասխանեցնելուն, այլ ոչ թե արմատական նոր ընտրական օրենսգրքից տարբերվող իրավակարգավորումներ ներմուծելուն:</p>
--	--	--	---

			<p>պահպանմամբ: Շրջիկ արկղով քվեարկության կազմակերպման կարգն ու պայմանները սահմանում է կենտրոնական հանձնաժողովը»:</p>	
52.	Պատգամավոր Վահրամ Մկրտչյան	Նոր հոդված	<p>Հայաստանի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ բնակվում են արտերկրում և չնայած ունեն քվեարկությանը մասնակցելու իրավունք, սակայն նրանց համար քվեարկությանը մասնակցելու պայմաններ ապահովված չեն: Յուրքանցյուրի համար էլ ակնհայտ է, որ անձը լինելով արտերկրում հատուկ քվեարկությանը մասնակցելու նպատակով դժվար թե ներկայանա Հայաստան, թեկուզև այն տրանսպորտային ծախսերով պայմանավորված, որոնք պետք է կատարի:</p> <p>Ուստի նշված անձանց քվեարկությունը կազմակերպելու նպատակով առաջարկվում է տեղամասերի բացում նաև արտերկրում: Այս կապակցությամբ առաջարկվում է, ներկայացված օրենքը լրացնել նոր 13.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«Հոդված 12.1. Օրենքը լրացնել նոր 27.1 հոդվածով հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 27.1. Օտարերկրյա պետություններում քվեարկության կազմակերպումն ու անցկացումը</p> <p>Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկներում կազմավորվում են հանրաքվեի տեսամասեր: Հանրաքվեի տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են դիվանագիտական կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի կողմից: Օտարերկրյա պետություններում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմված են հինգ անդամից:</p> <p>Հանրաքվեին մասնակցող անցանց ցուցակները կազմում են դիվանագիտական կամ հյուպատոսական հիմնարկները և հաստատվում են այդ հիմնարկների ղեկավարների կողմից՝ հանրաքվեին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց գրավոր դիմումի հիման վրա: Նշված ցուցակները քվեարկությունից երկու օր առաջ հրապարակվում են տեղամասային կենտրոնի շենքում:</p> <p>Քվեարկության օրը տեղամասային կենտրոն այցելող քաղաքացիները, որոնք անունները բացակայում է հանրաքվեի մասնակիցների ցուցակից կարող են մասնակցել քվեարկությանը լրացուցիչ ցուցակներ ընդգրկվելու միջոցով:</p> <p>Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկներում քվեարկության մասնակցության կարգը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը»:</p>	<p>Չի ընդունվել, սույն օրենսդրական նախաձեռնության ներքո իրացնելու շրջանակներում: Կարևորելով, արժեքավոր համարելով և ողջունելով առաջարկը, հեղինակները գտնում են, որ այն ենթակա է քննարկման, լրացուցիչ իրավակարգավորումների համալրմամբ ընդունման ընտրական համակարգի ամբողջական վերանայման դեպքում և ժամանակ: Ներկա նախաձեռնությունը առնչվում է հանրաքվեի գործող օրենքի դրույթները ընտրական օրենսգրքին համապատասխանեցնելուն, այլ ոչ թե արմատական նոր ընտրական օրենսգրքից տարբերվող իրավակարգավորումներ ներմուծելուն:</p>

53.	Պատգամավոր Վահրամ Մկրտչյան	Նոր հողված	<p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկներ կան կոնկրետ պետության միայն որոշ քաղաքներում, ապա առաջարկվում է, որպեսզի նախատեսվի հրավարագավորում ընդլայնելով էլեկտրոնային քվեարկության ինստիտուտը: Այդ ինստիտուտը, որն ամրագրված է ընտրական օրենսգրքում ունի շատ սահմանափակ կիրառում և դրանից օգտվում են միայն որոշակի խումբ քաղաքացիները (ընդամենը մի քանի հարյուր): Առաջարկվում է նախատեսել առանձին նոր հողված էլեկտրոնային քվեարկության սահմանները լայնացնելու և այդ միջոցով ավելի շատ քաղաքացիների քվեարկությանը մասնակցելու իրավունք վերապահելու համար:</p>	<p>Չի ընդունվել, սույն օրենսդրական նախաձեռնության ներքո իրացնելու շրջանակներում: Կարևորելով, արժեքավոր համարելով և ողջունելով առաջարկը, հեղինակները գտնում են, որ այն ենթակա է քննարկման, լրացուցիչ իրավակարգավորումների համալրմամբ ընդունման ընտրական համակարգի ամբողջական վերանայման դեպքում և ժամանակ: Ներկա նախաձեռնությունը առնչվում է հանրաքվեի գործող օրենքի դրույթները ընտրական օրենսգրքին համապատասխանեցնելուն, այլ ոչ թե արմատական նոր ընտրական օրենսգրքից տարբերվող իրավակարգավորումներ ներմուծելուն:</p>
54.	Պատգամավոր Հովհաննես Սահակյան	Նոր նախագիծ	<p>Օրենսդրական նախաձեռնությունը լրացնել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, որտեղ արտացոլել «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում արգելված արարքների համար վարչական պատասխանատվությունը սահմանող դրույթները:</p>	<p>Առաջարկությունը չի ընդունվում: Նախ գործող օրենքի 38-րդ հոդվածը սահմանում է, որ հանրաքվեի մասին օրենքի դրույթների խախտումն առաջ է բերում ընտրական իրավունքի դեմ կատարված իրավախախտումների համար օրենքով սահմանված պատասխանատվություն: Հետևաբար վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով ընտրական ոլորտին վերաբերող բոլոր իրավախախտումների համար նախատեսված</p>

				<p>պատասխանատվությունը կիրառելի է նաև հանրաքվեի համար՝ ըստ վերաբերելիության: Բացի այդ, առաջարկվող վարչական պատասխանատվության նոր պահանջները պետք է քննարկվեն ընդհանրապես ընտրական ողջ համակարգի համար, ինչը դուրս է այս նախագծի նպատակների և հիմնավորման շրջանակներից:</p>
55.	Հեղինակներ	Հոդված 4-ում նոր շարադրանք	<p>Հանրաքվեր մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 5-րդ մասով.</p> <p>«5. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հարաքվեն կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների համար սահմանված կարգով, որին կարող են մասնակցել ընտրական օրենսգրքով համապետական ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիները:»:</p>	Ընդունված է